ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԹ/1-032/463/7

Ք.Երևան 30 նոյեմբեր 2022թ.

«ԳՈՐԾՔ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ն (այսուհետ՝ Գնորդ) ի դեմս տնօրեն Ն. Սահակյանի մյուս կողմից (այսուհետ Գնորդը և Վաճառողը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1.Վաճառողը Գնորդին է վաճառում իր կողմից հիմնադրված «ԳՈՐԾՔ» ամսագրի տպագիր ամսագրի (այսուհետ՝ Ամսագիր) մեկական օրինակ սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված գումարով և սույն պայմանագրի 1.3-րդ կետում նշված ժամկետներում:

1.2.Գնորդը ձեռք է բերում Ամսագրի հերթական համարները երկու փուլերով՝

1.2.1. Առաջին փուլ՝ սկսած Ամսագրի 157-րդ համարից մինչև ամսագրի 168-րդ համարները ներառյալ, որը համապատասխանաբար սկսվում է 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը:

1.2.2.Երկրորդ փուլ՝ առաջին փուլի ավարտից հետո սույն պայմանագիրը կհամարվի անորոշ ժամկետով կնքված և կգործի մինչև սույն պայմանագրի 4-րդ բաժնում սահմանված կարգով սույն պայմանագրի լուծումը:

1.3.Վաճառողը Գնորդին է տրամադրում Ամսագրի տպագիր տարբերակի հերթական համարը՝ այն թողարկվելուց 7(յոթ) աշխատանքային օրերի ընթացքում:

2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Վաճառողն իրավունք ունի՝

2.1.1.Պահանջել Գնորդից վճարելու սույն պայմանագրով ձևավորված գումարը տասնօրյա ժամկետում:

2.1.2.Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը:

2.2.Վաճառողը պարտավոր է՝

2.2.1.Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ամսագիր:

2.2.2.Սույն պայմանագրի 1.3-րդ կետում նշված ժամկետում Ամսագիրը Գնորդին հանձնել նրա կողմից նշված հասցեում:

2.3.Գնորդն իրավունք ունի՝

2.3.1.Պահանջել իրեն հանձնել սույն պայմանագրի պայմաններին համապատասխանող Ամսագիր:

2.3.2.Սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը:

2.4.Գնորդը պարտավոր է՝

2.4.1.Վաճառողին վճարել սույն պայմանագրի 3-րդ բաժնում նշված կարգով վճարման ենթակա գումարը:

2.4.2.Ընդունել Ամսագրի հերթական համարը, ստորագրել, կնքել և մեկ ամսվա ընթացքում հետ վերադարձնել դրա հետ կցված փաստաթղթերը՝ սույն պայմանագիրը, հաշիվ-ապրանքագրերը և այլն:

2.4.3.Խելամիտ ժամկետում Վաճառողին տեղեկացնել Գնորդի իրավաբանական տվյալների փոփոխության մասին (հասցեափոխություն, անվանափոխություն, էլեկտրոնային հասցեի փոփոխություն և այլն):

3.Պայմանագրի գինը, վճարման կարգը և ժամկետները

3.1.Ամսագրի գինը յուրաքանչյուր համարի համար կազմում է 9300 (ինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Վաճառողի կողմից կատարված հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

3.2.Գնորդը սույն պայմանագրով ձևավորված գումարը փոխանցում է Վաճառողի հաշվարկային հաշվին:

3.3.Վճարման կարգը՝

Վճարման ձևը	Վճարման ժամանակացույցը	Նշել (√)
Կանխավճարային	Վճարումը կատարվում է սույն պայմանագրի 1.2-րդ կետում նշված ժամանակաշրջանի համար՝ համաձայն դուրս գրված փոխանցման-հաշվի:	
Հետվճարային	Վճարումը կատարվում է յուրաքանչյուր Ամսագրի փաստացի առաքման օրից 10 (տասը) աշխատանքային օրերի ընթացքում՝ համաձայն էլեկտրոնային տարբերակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթի:	√

4.Պայմանագրի վաղաժամկետ լուծման կարգը

4.1.Վաճառողի նախաձեռնությամբ սույն պայմանագիրը կարող է լուծվել հետևյալ կարգով՝

4.1.1.Վաճառողը սույն պայմանագրի լուծման մասին գրավոր դիմում է ներկայացվում Գնորդին՝ պահանջելով կատարել սույն պայմանագրի 2.4-րդ կետում նշված պարտավորությունները և/կամ շտկել թույլ տրված խախտումները:

4.1.2.Եթե Գնորդը սույն պայմանագրի 4.1.1-րդ կետում նշված դիմումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրերի ընթացքում չի կատարում և/կամ չի շտկում դիմումով ներկայացված պահանջները, ապա սույն պայմանագիրը համարվում է լուծված՝ դիմումը ստանալու 6-րդ (վեցերորդ) աշխատանքային օրը:

4.2.Գնորդի նախաձեռնությամբ սույն պայմանագիրը կարող է լուծվել հետևյալ կարգով՝

4.2.1.Գնորդը սույն պայմանագրի լուծման մասին գրավոր դիմում է ներկայացնում Վաճառողին՝ Վաճառողի իրավաբանական և/կամ էլեկտրոնային հասցեներով՝ նշելով սույն պայմանագրի լուծման հիմքը:

4.2.2.Վաճառողի կողմից Գնորդի դիմումի հիման վրա կսկսվի սույն պայմանագրի լուծման գործընթացը՝ Գնորդի կողմից սույն պայմանագրի 2.4-րդ կետում նշված պարտավորությունները կատարված լինելու դեպքում:

4.2.3.Այն դեպքում, երբ Գնորդը ունի կանխավճար ապա Վաճառողը 7 (յոթ) աշխատանքային օրվա, ընթացքում հետ է փոխանցում սույն պայմանագրի գումարի այն մասը, որի համար Ամսագիրը չի առաքվել:

4.2.4.Դիմումի համաձայն կպատրաստվի սույն պայմանագրի լուծման մասին համաձայնագիր:

4.2.5.Համաձայնագիրն երկկողմանի ստորագրվելուց հետո սույն պայմանագիրը կհամարվի լուծված:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1.Բոլոր վեճերը և տարաձայնությունները, որոնք ծագում են սույն պայմանագրից կամ դրա խախտման, դադարեցման կամ անվավերության հետ կապված, պետք է լուծվեն բանակցությունների միջոցով: Եթե ցանկացած պատճառով անհնար է լուծել վեճերը բանակցությունների միջոցով, վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2.Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և/կամ լրացում կատարվում է համաձայնագրի միջոցով, որը վավեր է պայմանով, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի համաձայնագրերը դրա անբաժանելի մասն են:

5.3.Ամսագրում ներկայացված նյութերը հանդիսանում են Վաճառողի մտավոր սեփականությունը և պաշտպանվում են հեղինակային իրավունքով՝ առանց որևէ բացառիկ իրավունքի զիջման:

5.4.Սույն պայմանագրի հավելվածները համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մաս:

5.5.Գնորդի կողմից պայմանագրի 3-րդ գլխով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.5(զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.6.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն պայմանագրի մեկական օրինակ:

5.7.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ սույն պայմանագրի 4-րդ բաժնում սահմանված կարգով սույն պայմանագրի լուծումը:

6.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ	**«ԳՈՐԾՔ» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ազատամարտիկների պուրակ 1 ՀՎՀՀ՝ 06909818 Բանկ՝ ՀՀ Ֆ/Ն գործառնական վարչություն Հ/Հ՝ 900238000534	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք ՀՎՀՀ՝ 01552766 Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ՝ 163008154870
Տնօրեն՝ Digitally signed by SAHAKYAN NARINE Ն. Սահակյան	Տնօրեն՝ SARGSYAN ARMEN 2611850178 Digitally signed by SARGSYAN ARMEN 2611850178 DN: c=AM, st=••••••••, givenName=••••, serialNumber=49AB5C1313D5, cn=SARGSYAN ARMEN 2611850178 Date: 2022.11.30 17:41:47 +04'00' Ա. Սարգսյան